հայութեամբ հոյակապն Կաֆա որով և եկեղեցիք դարցել են բոյն չղջկանց և բուէճից։

Սակայն աւերակն ևս Կաֆա, միշտ սիրային անկիւն մի գրաւած է հայ անեցի գաղթականաց սըրտերուն մէջ, և մինչև ցայսօր քաղցրալուր կը հնչէ այն անունը հայ ականջաց։ Անցեալ դարու մի հայ գրիչ պանծանօք կը գրէ ․

« Կաֆա քաղաք ծովահայեաց, Եկեղեցիքը զարդարուած » ։

Արդեօք ազգիս կրած բազմապատիկ վիշտե՛րն են, այս քաղաքիս մէջ այդ սիրոյ զգացման շարժառիթը, թէ բիւրաւոր նահատակաց արեան գետերը, որք ողողած են քաղաքիս հողն և գետին։

Որպէս և իցէ Թէոդոսիա քաղաքը յընթացս հաբիւրաւոր տարիներու, բիւրաւոր ազգայնոց գործունէութեան ասպարէզ եղած է, և կ'արժէ ազգայնոց այս քաղաքին հին և նոր պատմութեան[1] ծանօթ լինել։

1 ․ Որպէս զի ամէն տողի չհարկադրիմք ծանօթութիւնք յաւելուլ, կը կանխեմք գրուցել, որ առաջիկայ պատմական յօղուած քաղել եմք գլխաւորաբար յիշեալ աղբիւրներէ ։

Յիշատակարան Օդեսայի հնագէտ ընկերութեան, ի ռուս լեզու ։ Պատմութիւն կաղաքաց ափնարհի փիլիպ ․ Bruun. կաճառորդ գիտութեանց, ակադեմեային Ս ․ Պետրբուրգի, 'ի Գաղղ ․ լեզու ։ Անտիպ Պատմութիւն Թէոդոսիոյ Փ ․ Լագորիոյ ․ ի գաղղ ․ լեզու ։

Ազգային աղբիւրք ․ Ճանապարհորդութիւն ի Լեհս Վ ․ Հ ․ Մինասայ Բժշկեան, և այլ անտիպ յիշատակարանք ։